Զ. ՏԱՐԻ 1583 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 8 ԱՀԵԿԱՆ 1381 — Հ. Տ. 15 ԱՊՐԻԼ 1889 — Ն. Տ. 27 ԱՊՐԻԼ 1889 — ՀԻՃՐ. 26 ՇԱՊԱՆ 1306 — ՇԱԲԱԹ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՈՐԾԻՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	գահեկան դրամ	160
» »	Վեցամեայ	» »	80
» »	Եռամեայ	» »	40
Գաւառաց »	Տարեկան	» »	200
» »	Վեցամեայ	» »	100
Օտար երկիրներէ տարեկան	Ֆրանք		56
» »	վեցամեայ	»	28

Դուրս զրկուած յրագրաց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան զրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 15 ԱՊՐԻԼ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴԷՊԻՔԵՐՆ Ի ՍՈՒՏԱՆ

Սոֆէն, ապրիլ 22, առ Թ. Ա.

Ուրբաթ օր Տէրվիշներ, մզգառներու մէջ պահուրտած չատ մը Սուլտանցոց օգնութեամբ, յարձակեցան Հալիապի վրայ, պահապան զօրքէն երկու հոգի սպաննելով և հինգ հոգի վիրաւորելով։ Պահապան զօրքն հարկադրեցաւ նահանջել և ապաստանիլ Աֆէդ անուն եգիպտական պետական շոգենաւն։ Եգիպտացիք իրենց թշնամեաց դէմ մաքառելով մինչեւ ետ զերքն հասան, և լոզալով շոգենաւը մնան։ Աֆէդ յայտնեցաւ կրակ բացաւ Տէրվիշներուն վրայ, որոնցմէ վաթսուն հոգի սպաննեց։ Այս շոգենաւ իբր 300 գաղթականներ ետ բերաւ։ Այս Մէհտիականք Պէրպերէ եկած կը կարծուին։

Մէհտիականք գրաւեցին ի Հալիապ ամբարեալ վաճառքն, իբր 600 հակ։ Բիրդ մը չենելու վրայ էին եգիպտացիք, բայց աւարտած չէր լինուիթիւնն, և Պաշի Ոզուզները չէին կրցած պաշպանողական վիճակի մէջ դնել այս գիրքը։ Հալիապի Շէյխին որդին սպաննեցաւ ճակատամարտին մէջ։ (Մեծ. Օրէնդրալ)

Ի ՊԵԼՃԻՈՒ

Պելճիոյ հանրային կարծիքը կը հաւանի պելճ կառավարութեան բռնած ընթացքին Պուլանժէ զօրավարի խնդրոյն մէջ։ Յայտնի է թէ պելճ կառավարութիւնն զՊուլանժէ երկրէն հեռացնելու համար արտաքսման հրամանագիր հանելու պէտք չունեցաւ։ Բարձրաստիճան պաշտօնատար մը գընաց ներկայացաւ զօրավարին, և հարցուց թէ իրա՞ւ է որ Լոնտոն երթալ մտադրած է։ Զօր. Պուլանժէ հասկըցաւ պաշտօնատարին միտքն, և հաստատական պատասխան տալով, յայտնեց թէ մինչեւ չորս օր պէտք եղած պատրաստութիւնը տեսնելով պիտի մեկնի։ Պուլանժէական լրագիրք հրատարակեցին թէ զօրավարը Լոնտոն կ'երթայ Մեծին Բրիտանիոյ Պուլանժէասիրաց կողմէ իրեն եղած սիրալիր հրաւէրի մը պատասխանելով։ Հանրապետական լրագիրք ոմանք ալ ծանուցին թէ Պուլանժէ պաշտօնապէս արտաքսուած է Պրուսէլէ։ Ճշմարտութիւնն այս երկու զրոյցներէն ալ կը տարբերի այնու զի պելճ կառավարութիւնը պաշտօնապէս խստութիւն բանեցնելու պէտք չունեցաւ, և Պուլանժէ յոչ կամաց հարկադրեցաւ թողուլ զՊրուսէլ։ զի Պրուսէլի և Փարիզի միջեւ հեռաձայն (Թէլէֆոն) կայ, որով հնար է կատարեալ գաղտնութեամբ և աժան հաղորդակցիլ։ Իսկ Լոնտոնի և Փարիզի միջեւ հեռագիր միայն կայ, և յայտնի է թէ հեռագրաց պարունակութիւնք կառավարութեանց կրնան հաղորդուիլ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍԻՆ ԵՒ ՀԱԲԻԲԱՄԵԱԿ ԾԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ

ՕՏԱՐ ԵՐԿՐԱՑ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Ապրիլ 20ին դուսմարուած նախարարական խորհրդին մէջ, արտաքին գործոց նախարար Պ. Սփիւլէր խորհրդին հաղորդեց պատճէնն շրջաբերականի մը, որ օտար երկրաց մէջ պաշտօնավարող ֆրանսական դեսպաններուն և գործակալներուն պիտի ղրկուի, հրաւիրելով զանոնք որ ազգային հանդամանք մը տան մայիս 5ի հանդիսին ի պատիւ 1789ի հարիւրամեակին։ Նախաբարը կ'ըսէ թէ 1789 այնպիսի թուական մ'է որ մասնաւոր կուսակցութեան մը չպատկաներ, այլ բովանդակ ազգին, և հետեւապէս ֆրանսական ազգն ողջոյն պէտք է մի և նոյն համերաշխ ոգւով տօնէ յիշատակն այն մեծ դէպքերու զորս իյուշ կ'ածէ այդ թուական։ Պ. Սփիւլէր կը հրաւիրէ դեսպաններն և դիւանագիտական գործակալներն՝ հաւաքել իրենց իրաւասութեան ներքեւ գըտնուող օտարաբնակ ֆրանսացի հպատակներն, և պատշաճապէս տօնել այս հարիւրամեակ։

Դաղթականութեանց խորհրդական Պ. Էթիէն եւս պէտք եղած միջոցները կարգադրեց որպէս զի 1789ի հարիւրամեակը գաղթականութեանց մէջ տօնուի մայր-հայրենեաց հետ միեւնոյն ժամանակ։

Հանրային շէնքերն ու յիշատակարանները, գաղթականութեանց մէջ եւս, որպէս ի Փարիզ, նոյն օրը դրօշներով և լուսավառութեամբ պիտի զարդարուին, և ի Սպանիոյ Կամպէթայի արձանի մը մերկացման արարողութիւնը պիտի կատարի նոյն օր։

ՓԱՆԱՄԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կը հերքուի այն լուրը թէ Փանամայի Ընկերութեան գատական հաշուեյարդար Պ. Պրիւնէ նոյն Ընկերութեան նախկին անօրէնի մը պաշտօն յանձներ է բանակցիլ Ընկերութեան բոլոր գոյքն ու ստացուածքն անգլիական խմբակի մը յանձնելու համար։

Պ. Պրիւնէ պարզապէս պաշտօն տուած է մէկու մը՝ ի հաշիւ Փանամայի Ընկերութեան փոխառութիւն մը կնքել ի Լոնտոն, և երբէք խօսք չէ եղած Ընկերութեան բովանդակ գոյքն ու ստացուածքն օտար սեղանաւորաց թողլու։

Ապրիլ 20ի առտուն Պ. Պրիւնէ եւ մնական նախարար Պ. Ռուվիէի հետ խորհրդակցութիւն մ'ունեցաւ յիշեալ փոխառութեան նկատմամբ, որոյ շնորհիւ կը յուսացուի բոլորովին դադարման վտանգի մէջ գտնուող աշխատութիւնները գէթ մասամբ շարունակել, և ցարդ կատարուած աշխատութեանց արդիւնքն ալ պահպանել։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

ԱՌԻԱԿԱՆ Վ.ՀԱՊՈՏՔ Ի ՓԵԹԵՐՍԲՈՒՐԳ

Շահին ի Փեթերսբուրգ այցելուն առթիւ, Խիվայի Խանն եւս հոն պիտի երթայ, և այս պատեհութեամբ ռուս կառավարութիւնն ինք հրաւէր պիտի ուղղէ Թուրքաստանի և Կեդրոնական Ասիոյ մեծ ու փոքր բոլոր վեհապետներուն և աւելի կամ նուազ ինքնօրէն իշխաններուն, ընդ որս Պուխարայի Էմիրին, ի Փեթերսպուրգ հաւաքուելու։

Ռուս կառավարութեան այս հրաւէրին բնականապէս քաղաքական կարեւորութիւն մը կ'ընծայուի։ Զարը կ'երեւի թէ կուզէ հակցնել այս իշխաններուն թէ իրենց դերիչխան վեհապետն իրեն մայրաքաղաք ունի զՓեթերսպուրգ։

ՌՈՒՍ ԲԱՆԱԿ

Պատասխանելով երիտասարդ Վիլհելմ Բ. Կայսեր անօրինութեան, որ գերման բանակին բոլոր տարիքոտ զօրապետները փոխելով երիտասարդ և կորովի սպայներ անոնց տեղ կարգած և այսպէս բանակին բարձր հրամատարութիւնն «երիտասարդեցուցած» էր, Զարն ևս մեծաւ քանակութեամբ մը նոր տարը մոցոյց իւր բանակին մէջ, մէկ հրամանագրով միայն փոխոխելով ոչ նուազ քան տասն և եօթն զօրապետներ։

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՆՐԱՑԻՆ ՊԱՐՏՔ ԳԵՐՄԱՆԻՈՅ

Ի վերջ 1874 տարւոյ, շնորհիւ Ֆրանսայէն ստացած հինգ միլիառներուն, գերման Կայսրութիւնը գրէթէ բնաւ պարտք չունէր։ 1876-77 տարիէն սկսեալ նոր փոխառութիւններ ըրաւ նորանոր ծովային և ցամաքային սպառազինութեանց համար։ Կայսրութեան այս նորակազմ հանրային պարտքն, 1877 մարտ 31ին, 16 ու կէս միլիոն մարքի չափ էր։ 1882ին՝ 319 միլիոն մարքէն աւելի էր։ 1885ին 400 միլիոնն անցաւ, և անցեալ տարի մարտ 31ին կը հասնէր 658 միլիոն մարքի պատկառելի գումարին։

Ֆրանկֆիկ Զայտուկ ազատական լրագիրը կը հաշուէ թէ 1888 նոյմ. 15ին, Կայսրութեան հանրային պարտքն հասած էր 818 միլիոն 787 հազար մարքի, և ասոր վրայ բարդելով նոր խնդրուած վարկերը, կ'երևի թէ ի վերջ 1889 տարւոյս այդ պարտք պիտի հասնի մէկ միլիառ 238 ու կէս միլիոն մարքի։

Ուրեմն, 18 տարւոյ միջոցին, գերման Կայսրութիւնը Ֆրանսայէն առած հինգ միլիառները վատնելէն զատ, մէկ միլիառ 200 միլիոն մարք ալ պարտք ըրած է՝ Ֆրանսայի նոր սպառութեանց դէմ զԳերմանիա պաշտպանողական զօրաւոր վիճակի մը մէջ դնելու համար։

ԿՐՕՆԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ

Սերպ լրագիր մը ծանոյց այս օրերս թէ Միլան թագաւոր միտքը դրած է Երուսաղէմի վանք մը մնալ, և կրօնաւորական վիճակ ընդունիլ։

Եթէ այս զրոյց (զոր մեր երեկի թուով յիշեցինք) ստուգուի, Միլան թագաւոր Սերպիոյ առաջին թագաւորը չպիտի լինի՝ վանք մը առանձնացող։ Սերպ Տէրութեան և Նէմանեան Հարստահարութեան անուանի հիմնադիրն, Ստեփան Նէմանիչ, Սթուանիչայի վանքին կրօնաւոր եղաւ յետ իւր հրաժարման ի գահէն, յամին 1195։ Յետոյ քաջուեցաւ Ա.նորոզի վանքը։ Նէմանեան Հարստութեան երրորդ թագաւորն, Ստեփան Ռոտոսլաւ, նմանապէս իւր կեանքը վերջացուց երբու կրօնաւոր մենաստանի մը մէջ։

Կիլիկիոյ պատմութիւնն ևս կը յիշէ այսպիսի ծանօթ դէպքեր։

Որովհետեւ սերպ լրագիր մ'ըսած էր թէ՝ կրօնաւոր դառնալով՝ Միլան թագաւորին նպատակն է սերպ ազգին Պատրիարք լինել, Վիեննայի թերթի մը կ'ըսէ։ «Սերպ պատմութեան վկայութեանց հակառակ, չենք կարծեր թէ Միլան թագաւոր յանձն առնու երբեք հրաժարիլ այս աշխարհիս հաճոյքներէն ու վայելքներէն՝ Սերպիոյ պատրիարքական գահուն սիրոյն համար։»

ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ Ի ՓԱՐԻԶ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍԻՆ ԱՌԹԻՒ

(Թարգմն Փարիզեան Թղթակցէն)

Ակներեւ էր թէ Արուեստահանդէսի առթիւ բազմաթիւ Համաժողովներ (Քոնկրէ) պիտի գումարէին ի Փարիզ, բայց անոնց թիւն ի վեր է քան զամենայն ակնկալութիւն։ Վաթսուն և լինն հատ միջազգային Համաժողովներ պիտի լինին, կազմակերպեալ ընդ կառավարական հովանաւորութեամբ, և ուրիշ շատ մը Համաժողովներ ալ պիտի գումարին անկախօրէն, առանց պետական նպաստի։ Այսպէս, կը ծանուցուին կանայց երկու Համաժողովներ։ Պաշտօնական Համաժողովն կանայց, ընդ կառավարական հովանաւորութեամբ, պիտի քննէ սահմանն կանայի գործունէութեան ի մասին բարեգործական ձեռնարկութեանց, շարժուն հիւանդանոցաց, աղքատաց և որբոց նպաստամատոյց նուիրատուութեանց, դաստիարակութեան, առողջապահութեան, և այլն։ Կանայի միւս անկախ Համաժողովը պիտի զբաղի քննութեամբ կանայի իրաւանց, պիտի վիճաբանի այն օրինաց վրայ որք դկանայս կը դնեն ստորին դիրքի մը մէջ, կանայց աշխատութեան և ընդունած վարձքին վրայ, և արդի ընկերութեան մէջ բարոյական վատթարացման և անկման պատճառներուն վրայ։

Այն 69 միջազգային պաշտօնական Համաժողովոց մէջ կան որ շատ հետաքրքրաշարժ բնութիւն մ'ունին։ Օրինակի համար, առաջին անգամ լինելով պիտի ունենանք միջազգային Համաժողով մը Հացագործաց, որ հացի արտադրութեան բովանդակ խնդիրը պիտի քննէ։ Յետոյ պիտի լինի Աղաւնեսիրաց Համաժողովն, յիշատակ Փարիզի պաշարման, յորմէ կը սկսի ֆրանսական համակրանքն առ Թրգիատար աղաւնիս։ Ամէն ազգաց ժողովրդային առածներն և առասպելները քննող Համաժողով մ'ալ հետաքրքրաշարժ խուզարկութիւններ պիտի ընէ, և Հոգեբանական Համաժողովոյն մէջ թաքուն գիտութեանց դաղտնիքները պիտի պարզուին։ Պաշտօնական Համաժողովներէն տասն և մին կը վերաբերին բժշկական և առողջապահական խնդիրներու, ինչպէս դատական բժշկականութիւն, կոկորդի հիւանդութիւնք, մորթի հիւանդութիւնք, ուսուցչական և կլիմայական դարմանումն հիւանդութեանց, գեղատուական գիտութիւն, և այլն, անձնիւր խնդիր ունենալով դիւր առանձին ժողով։

Այս միջազգային Համաժողովներէ տասն ալ ունին զբաղիլ տնտեսական խնդրով։ Գործակցական (Քօ-Օպէրատիֆ) Ընկերութեանց Համաժողովներ պիտի կազմուին՝ քննելու համար աղքատաց ածան և առողջապահիկ բնակարաններ հայթայթելու խնդիրը, շահերը գործատարց և գործաւորաց միջև բաժնելու խնդիրն, և։ Համաժողով մը հոգ պիտի տանի որ շաբթուն մէջ օր մը կատարեալ հանգիստ շնորհուի ամէն կարգի աշխատաւոր դասուց։ ուրիշ ժողով մը պիտի ուսումնասիրէ գաղթային խնդիրները՝ գործաւոր և միջին դասուց Եւրոպայէն հեռաւոր երկիրներ գաղթումը դիւրացնելու նպատակաւ։ Ամենէն առաջ գումարուողներէն մին պիտի լինի Խաղաղասիրաց Համաժողովն որ յունիս 1ին պիտի սկսի իւր նստիլ։ Յետոյ արագ պիտի յաջորդեն միջազգային Համաժողովներ՝ մարդկային կենաց ազատման համար, ալբոհոլի չարեաց դէմ մաքառելու համար, և վիճակագրական, ցեղագրական, կենդանաբանական, աշխարհագրական, ճարտարապետական, գրականական և կրթական Համաժողովներ, նաեւ ուրիշ ժողով մը՝ կուրաց վիճակին բարելաւութեան վրայ։ Այս ժողովք պիտի գումարին ի Թրքատերս, կամ մեծ սրահի մը մէջ կառուցեալ յատկապէս այսու նպատակաւ ի Փլաս տէղ Էնվալիտ, և անուանեալ Ա.Ա.Ֆ ժողովքներն։ Համաժողովներէն ոմանք պէտք է գումարին ի ներքս ի քաղաքին ի Սորպոնեան Կաճառն, ի Կաճառն Արհեստից եւ Գեղարուեստից, ի Բժշկական Վարժարանն, և այլ նմանօրինակ մասնաւոր հասատատութեանց մէջ։

Այս ժողովներէ շատը պիտի պահանջեն 20 ֆր. մուտք, և այսպէս գոյացեալ հասոյթով պիտի հրատարակուի անձնիւր ժողովին աշխատանաց մէկ ամբողջ տեղեկագիրն, որ ապա ձրի պիտի բաշխուի անդամից։ Պ. C. M. Gariel է ընդհանուր կազմակերպիչն այս Համաժողովոց ի դիմաց կառավարութեան, և կը խնդրէ որ ժողովներէս ո՛և է միոյն մասնակցիլ յօժարողք գրեն իրեն անմիջապէս, այսու հասցէիւ։ 39 · Rue Jouffroy, Paris։ Դուսմարելի Համաժողովոց յաջողութիւնն ապահովելու համար անհրաժեշտ է որ կազմակերպիչք վազագոյնս իմանան թէ ո՛ր ատենին աշխատութիւն կրնան ակնկալել օտարազգիներէն։

ՊՈՒԼԱՆԺԷ Ի ԼՈՆՏՈՆ

(«Թան»ի Լոնտոնեան Թղթակցէն։)

Կ'ըսուի թէ Պուլանժէ զիւր բնակութիւն ի Լոնտոն հաստատել որոշեր է։ Եթէ Պուլանժէ կը յուսայ նըպաստաւոր ընդունելութիւն մը գըտնել ասա, պէտք է ընաւ դաղափար չունենայ բրիտանեան բնաւորութեան վրայ։ Լոնտոնի ֆրանսական գաղթականութեան դարով, նա անաարբեր է քաղաքական իրաց ու դարձուածոց, և այդ գաղթականութեան առջեւ Պուլանժէ նոյնչափ պիտի չյաջողի որչափ չյաջողեցաւ Պ. Լիսպոն։ Պ. Պուլանժէ թերեւս բարեկամներ ունի անգլիական բարձր ընկերութեան մէջ, բայց անոնց թիւն անչուշտ կարի սահմանաւոր է, և չի բաւեր յաջողցնելու պուլանժէական ցոյց մը, ինչպէս կ'ուզեն կազմակերպել իւր հետեւորդք։

Պուլանժէ ի Լոնտոն եթէ հաստատուի մշտապէս, քիչ ժամանակէն պիտի կորսուի, մոռցուի բոլորովին։ Հոս չկայ Եւրոպիոյ ցամաքին յատուկ թղթակցական կամ լրաբերական խօսակցութեանց գրութիւնն, և Անգլիացիք ուշադրութիւն պիտի չտեն Պուլանժէի մէն մի խօսուածքին ու չարժուածքին։ Պուլանժէ պիտի չլինի «եղանակին ապիւռը», նման Բոռի գնդապետին, անուանեալն Պըֆալօ Պիլ, որովհետեւ Պուլանժէ հետը չունի երեք հարիւր ամերիկեան Հնդիկներ, որսորդներ, ըմբիշներ, ճամպարներ և այլն, եւ յետոյ, կարէսի իշխանն որ յաճախ կ'երթար Պըֆալօ Պիլի փորձերուն ու մարզանքներուն, պիտի չկրնայ երթալ այցելել Պուլանժէ զօրավարին, այսինքն՝ մեծ սրահները պիտի չբացուին «ազգային մեծ կուսակցութեան պետին» առջեւ։ Անգլիական կառավարութիւնը կատարելապէս ազատ պիտի թողու զնա, զի քաջ գիտէ որ Անգլիա եռանդագին յարում մը պիտի չզդայ Պուլանժէի համար, ինչպէս չըզդաց ուրիշ շատ մը թեկնածուներու համար որք պարբերաբար ապաստանած են յԱնգլիա, և ասոնց ամէն պուլանժէական ցոյց ծաղրելի պիտի դառնայ։

ԴՈՐԾԱՒՈՐԱՑ ԿԵԱՆՔԸ

Այսօր, 27 ապրիլ, Վիլհելմ Կայսր կը նախագահէ ի Պերլին ցուցահանդէսի մը բացման, ուր հասարակաց գնահատման կը ներկայացուին բոլոր այն նորահնար գործիքներ որք սահմանեալ են գործարանաց մէջ արկածներու առաջքն առնուլ և աշխատաւորաց կեանքը դիրք կացուցանել շատ մը յանկարծահաս վտանգներէ։

Կը կարծուի թէ Պելճիոյ թագաւորը պիտի երթայ այցել այս ցուցահանդէս, որ տեսակին մէջ առաջինն է Եւրոպա, և իւր մեծ օգտակարութեամբ գաղափարը, այն համակրանքը որում ծնունդ կուտայ մեծ անձնուիրութեան մը ապահովութիւնը։ Նոյնպէս ոչինչ ի նա վստահութիւն կ'ազդէր ինձ։ Արդէն այս առաջին տեսակցութիւնը քիչ տուեց։ կոմսը կերպով մը խզեց զայն, իբր թէ պէտք ունենար ի բաց վանելու յուզում մը որուն դէմ կը մարտնչէր կամ տպագայ ընթացքին վրայ խորհելու։ Կը յիշեմ որ զարմացայ իր յանկարծական մեկնումը տեսնելով, վասն զի կարելի չէր՝ տրամաբանօրէն մեկնել այս տեսարանին չարժառիթը։ բայց իր մեկնելէն յետոյ, բնազդաբար եւ գրեթէ ակամայ խորհեցայ այս այլանդակութեան վրայ, երբ բնականաբար կը ջանայի իր այցելութեան շարժառիթը մեկնել։

«Շատ անգամ տիկին վերատեսչուհին, որ յարատեւ հոգածութիւն մը ցոյց կուտար աշակերտուհւոյ մը նկատմամբ որով կը հպարտանար, կը զարմանար՝ ապագայիս եւ չահուցս վրայ հետս խօսած միջոցին՝ թէ ինչ անտարբերութիւն ցոյց կուտար խնամակալս ինձ նկատմամբ։ Իրաւ է թէ չէր անդիտանար որ Ս... կոմսին դիրքը քիչ ազատութիւն կը թողուր նմա։ սակայն իշխանուհին, ամէն անգամ որ Սէն-Տընի կ'այցելէր, չէր մոռնար բնաւ խօսք ուղղել ինձ՝ եւ ըսել թէ ինք կիսովին յանձնառու էր այն խօստմանց որք եղան հօրս մահուան ժամանակ։ կատարեալ բարութեամբ մը կը յայտնէր ինձ այն գոհունակութիւնը զոր կ'ունենար իմ յառաջդիմութիւնս եւ վարմունքս տեսնելով։ կը քաջալերէր զիս որ շարունակեմ, եւ իբր հրաժեշտ, կըսէր։

—Պարոն կոմսը շատ երջանիկ պիտի ըլլայ իմանալով որ իր սանը բարեպաշտ, գիտուն եւ խելացի է։

«Հակառակ այն գոհունակութեան զոր զգացած էր անչուշտ Ս... կոմսն այս սիրալիր յարաբերութեանց պատճառաւ, ես՝ ինչպէս ըսի՝ մէկ անգամ միայն իր այցելութիւնն ընդունած էի։ Ուստի դեռ այս եղական պարագային վրայ կ'երաշխի, երբ տիկին վերատեսչուհին կոչել տուաւ զիս։

«Տխուր կը գտնէի զինքը։

«—Սիրելի զաւակս, ըսաւ զիս համբուրելով, կը յուսայի որ քիչ հարստութեանդ եւ խնամակալիդ անտարբերութեան շնորհիւ պիտի երկարէր քու կենակցութիւնդ մեզ հետ, քանի որ երջանիկ էիր այստեղ։ սակայն, ցաւօք սրտի նախազգացումի մը կուենամ թէ այդպէս չպիտի ըլլայ։

«—Ինչպէ՞ս, գոչեցի։ պարոն կոմսը այս մասին բացատրութիւն մը ունեցաւ ձեզ հետ։ Իսկ ինձ, փառք Աստուծոյ, չըսաւ այն տեսակ բան մը որ իմ մեկնումս դուշակել տար։

«—Ինձ ալ դրական բան մը չըսաւ, սիրելի աղջիկս, յարեց վերատեսչուհին։ սակայն երբ փորձեցի զինքն հարցաքննել քեզ նկատմամբ ունեցած խորհրդոցը վրայ, բուռն կերպիւ ընդդիմացաւ այն գաղափարին, թէ դու կրթութեան գործին նուիրուելու ես։—Սակայն, պարոն, ըսի նմա, օրիորդ տը Մոռմսն հարստութիւնն չունի։ — Ճշմարիտ է, պատասխանեց։—

(Շարունակեալ)

—)(47)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ

ՖԷՐՆԱՆՏ

թեամբ, արդէն առարկայ կը լինի հասարակաց ուշադրութեան։

Ցայտնի է թէ գերման կառավարութիւնն, ուրիշ քանի մը յառաջացեալ կառավարութեանց պէս, յատուկ օրէնք մը քուէարկել տուած է Խորհրդարանին, որով հանդստեան թոշակ մը կը սահմանէ իրենց աշխատութեան բերմամբ վտանգուելով աշխատելու անկարող դարձած գործաւորներուն համար, ինչպէս և այն ծեր գործաւորաց համար որք այլևս անկարող են աշխատիլ։

ԱՒՍՏՐԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Ծանուցինք թէ Բրուսիոյ պատերազմական նախարարը վերջերս աւստրեան զինագործարաններուն ապատրած է 450,000 հատ Մանլիխէրեան նորահնար բազմահարուածեան հրացան։ Վիեննայէ կը հեռագրուի թէ գերման կառավարութիւնն աւստրեան գործարաններուն միայն 18 ամիս պայմանաժամ տուած է՝ բոլոր այս զէնքերն յանձնելու համար։

ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Հնդկաստանի անգլուհնդիկ բանակին սպայից մէկ մասն արդէն պարտաւոր են ռուսերէն սովրիլ հիմնովին, և այժմ քաղաքային պաշտօնէից մէկ մասն ևս նոյն պարտաւորութեան ենթարկեցան։ Սոքա Հնդկաստանի մէջ ըստ կարելւոյն ուսնելէ յետոյ ռուս լեզուն, ութ ամիս ի Ռուսիա պիտի բնակին՝ լեզուին կատարեալ գործածութեան վարժուելու համար։ Ռուս բանակին սպայներէն շատեր պարտաւորիչ կերպիւ կ'ուսնին գերմաներէն և անգլիերէն։

ԳՈՂՈՒԹԻՒՆՔ Ի ՎԱՏԻԿԱՆ

Հռոմ, 23 ապրիլ. — Հրատարակութեանց քննիչ (Ինդէքսի) ժողովոյն եօթն պաշտօնեայք ձերբակալեցան։ Եղած գողութիւնք մէկ ու կէս միլիոն ֆրանքէ աւելի են։ (Մծ. Օրէնդրել.)

* * *

Հռոմ, 23 ապրիլ. — Հռոմ և Իտալիա անուն գրգռիչ տետրակին հեղինակն է Պոնոմէլլի արքեպիսկոպոսն, որ հարիւգրեցաւ Պապէն ներում խնդրել հրապարակաւ ի մայր-եկեղեցւոյ Վատիկանի։ (Նոյն.)

ԵԳԻՊՏԱՑԻՔ ԵՒ ՍՈՒԼԹԱՆՑԻՔ

Լոնդոն, 23 ապրիլ. — Անգլիական Սբ-ԼՈՒՒ թնդանօթակիրն և եգիպտական Մոխդար և Ակէդ թնդանօթակիրները Սուաքինէ հալիսպ գային անմիջապէս, այն դիրքը Սուանցի ապստամբաց ձեռքէն ետ առնելով հոն բերդ մը շինելու նպատակաւ։ (Մծ-ԷՐԷՕՐ.)

ՀՈԼԼԱՆՏԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԸ

Թէեւ Հոլլանտիոյ թագաւորին առողջական վիճակն անյոյս նկատուելով բժշկական տեղեկագրերով՝ Խնամակալութիւններ հաստատուած էին Հոլլանտիոյ և Լիւքսեմպուրգի մայրաքաղաքներուն մէջ, բայց վերջին օրերս առնուած զանազան հեռագրեր ընդ որս ապրիլ 23 թիւ հեռագիր մը Լա Հէյէն, կը ծանուցանէ թէ Ն. Վեհափառութեան վիճակը բարւոքած և ապաքինութեան ճամբուն մէջ մնած է։

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՑՍՐ

Պերլին, 23 ապրիլ. Կայսրն և Կայսրուհին այս առաւօտ Տրեզդէ գային յայցելութիւն Սաքսոնիոյ թագաւորին։

* * *

Վիլհէլմ Բ., որ կրօնական պատմական յիշատակները խնամով կը պահէ, մի քանի օրէն պիտի երթայ ի Վարթպուրկ, որ անուանի է Բողոքականութեան պատմութեան մէջ, Լուտերի հին բնակութեան պատճառաւ։

—Պիզմարք իշխան այս գարնան պիտի չմեկնի Պերլինէ, այլ պիտի սպասէ գալստեան Իտալիոյ թագաւորին, որ Պ. Քրիսպիի հետ Պերլին պիտի երթայ ի փոխադարձ այցելութիւն Վիլհէլմ Կայսերս։

«ՏԱՆՄԱՐԲ» ՇՈՒԵՆԱՒԻ

Վերջին օրերս բուռն մտահոգութիւն կար Տանմարկի դանիական շոգենաւուն նըկատմամբ, որ իւր հարիւրաւոր ուղեւորներով կորած կը կարծուէր։ Բայց առնուած նոր և ստոյգ տեղեկութիւնք ուրախաւէտ են։ Այս շոգենաւուն մէջ ապրիլ 4ին պայթում տեղի ունենալով, մեքենավարը մեռեր է, և քիչ մը ետքը շոգենաւն անկարող եղեր է ճամբայն շարունակել։ Բայց ամերիկեան ջուրց մէջ գալիթմարէ Ֆիլատէլֆիա գացող Մէսսրի շոգենաւն օգնութեան հասնելով, ծովը նետեր է իւր բեռցած վաճառքն, և հ/ւրընկալեր է արկածեալ շոգենաւուն 714 ուղեւորներն և նաւաստիները, զորս մասամբ Ասպիեան կղզիներն հասեր է, մասամբ ալ Ֆիլատէլֆիա փոխադրեր է։ Իսկ Տանմարկ շոգենաւը կորեր է բոլորովին։

ՊՈՒԼԱՆԺԷԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Փէրս պուլանժէական օրաթերթն, որ սնանկութիւնը ծանուցինք, ամուրգի հանուելով, իւր խմբագրապետ Պ. Լակէռ 165 հազար ֆրի գնեց զայն։

ԶԱՐԱԿԱՆ ՏՀԱՃՈՒԹԻՒՆ

Նայէ Ֆրայէ Փէրէ կ'իմանայ թէ մեծդուքս Վլատիմիր ո՛և է պատճառաւ ենթակայ եղած է Զարին տհաճութեան, որ հրամայած է նմա վեց ամիս օտար երկիրներ երթալ։

Վարչական կուսակալ Զօր. Կուրքօ մեծ-դքսին տեղ հրամանատար կարգուած է կայսերական զօրաբանակին ի Փեթերսպուրկ, և Զօր. Կրէսէր, հրամատար Փեթերսպուրկի շրջանակին, անուանուած է կուսակալ Վարշաւոյ։ (Լ. Հերալտ.)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ելմտացոյցի քննիչ Ցանձնաժողովոյ նիստը տեղի չունեցաւ երէկ անդամից մեծագոյն մասին բացակայութեան պատճառաւ։ Ներկայք որոշեցին յառաջիկայ չորեքշաբթի օր վերջին դումարում մը ունենալ ի Պատրիարքարան և պատրաստել առ Ազգային ժողովն մատուցանելի տեղեկագիրը։

Յաւօք սրտի կիմանանք թէ Բեգրըպուրկի Արեւելեան լեզուաց ձեմարանին մէջ, հայերէնի, արաբերէնի եւ արեւելեան դրականութեան հրաչափառ դասատու Բրոֆ. Պ. Բերովբէ Պատկանեանց, երկար եւ ծանր հիւանդութենէ մը յետոյ մեռեր է ապրիլ 2 ի իրիկունը։

Պատրիարքական Փոխանորդ Դեր. Գէորգ Ծ. վարդապետ Իւթիւճեանի շրջնորհեալ երրորդ կարգի Մէճիտիէ պատուանշանն երէկ յատուկ պաշտօնէի մը ձեռամբ Ազգ. Պատրիարքարան բերուելով Ն. Գերապատուութեան յանձնուեցաւ հանդերձ կայս. Պերաթով։

Կը լսենք թէ ի նպաստ Խոտիւղի Ներսէսեան երկսեռ վարժարանին Լատրան մը պիտի տրուի ամսոյս 23ի կիւրակէ օրը, Բերայի Ցունաց Սիլլոգոսի սրահին մէջ ուր պիտի առնեսանեն Վսեմ. Ստեփան փաշա Ասլանեան, Մինաս Զերաղ էֆէնտի և Ռեվերէս էֆէնտի Պէրպէրեան։

Վաղը, կիւրակէ, տեղի կ'ունենայ Սկիւտարի Ս. Խաչ երկսեռ վարժարանաց պարգեւաբաշխութեան հանդէսը, ժամ 6½ին։

Ազգային դաստիարակութեան կրօնագիտական ճիւղին մէջ այս անգամ կարեւոր դասարան մը կը բնս. Սրժ. Սահակ քահանայ Սահակեանցի «Սէքսլոն պատմութիւն Հին Ուխտ» ընտիր դասագիրքը առաջին անգամ հրատարակեալ ի Տփղիս -1888- գին դահեկան 5։ Դարձեալ նոյն ուսման դասատուաց յատուկ մասը «Դասաբէրտ կրօնի — Հայ կրօնասոյնների համար» գին դահեկան 25։ — Վաճառման կեդրոնատեղին է Բիւզանդեան Գրատուն ի Դալաթիա, Սեղբոս խան, թիւ 5, որ բաց է ամեն երեքշաբթի և ուրբաթ, իսկ միւս օրերը առաւօտ և երեկոյ միայն։ 48հ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԿԻ ՍԼԼԱՄԼԸՔԸ

Սելամլրքի արարողութիւնը տեղի ունեցաւ երէկ Համիտիէ մզկիթին մէջ։ Վեհ. Սուլթանը միջօրէին հանդիսաւոր կերպիւ յիշեալ մզկիթը գնաց և կատարեց ուրբաթի աղօթքը Յեսայ Ն. Վեհափառութեան հրամանաւ՝ Սելամլրքին ներկայ գտնուող հեռակայ զինուորք մեծ անցք մը կատարեցին և նոյն պահուն կայս. պատան նուագածուաց խումբն Համիտիէ քայլերգը նուագեց։ Հետեւակ զորաց անցքէն յետոյ հեծեալ զորքերն ևս անցք մը կատարեցին որոյ միջոցին երիտզրուլ հեծելազնդին նուագածուքն անընդհատ նուագեցին։ Այս հանդէսէն յետոյ Վեհ. Սուլթանը կայս. պալատ վերադարձաւ։

* * *

Սելամլրքի արարողութեան պահուն, անցեալ օր մայրաքաղաքս եկող 65 հունդարացի զրօսաշրջիկք կայս. պալատան հանդէպ յատուկ տեղ մը կեցած էին, եւ Վեհ. Սուլթանի անցած պահուն միաձայն գոչեցին «Լէյէն (կեցցէ՛) Սուլթան-Ապդ-Իւլ-Համիտ»։ Ն. Վեհառութիւնն մզկիթ երթալէ յետոյ կայս. աւագ թիկնապահ Ֆուատ փաշան զրկեց որ Վեհ. Սուլթանի կայսերական բարեւներն հաղորդելէ յետոյ հարկ եղած մեծարանքներն ըրաւ հունդարացի հիւրերուն ոգի կրկին անգամ իրենց լեզուաւ գոչեցին «կեցցէ՛ Վեհ. Սուլթան»։

* * *

Մանրամասն կ'իմանայ թէ հունդարացի զրօսաշրջիկներէն պատգամաւորութիւն մը կազմուած է Վեհ. Սուլթանին ներկայանալու և մատուցանելու համար Ն. Վեհափառութեան արծաթեայ կնարձանն ինչպէս նաև ոսկեզոծ ճոխ ալբոմ մը, Թուրքերոյ և Հունդարիոյ զինանշաններով պատուած։ Այդ ալբոմ կը պարունակէ Ն. Վեհափառութեան ուղղեալ ուղերձ մը, թուրքերէն և հունդարերէն լեզուներով գրուած և Հունդարիոյ բարձրատիճան անձանց կողմէ ստորագրեալ։

* * *

Համիտիէ մզկիթին հանդէպ ձեպը Հիւմայունի պաշտօնատան մէջ կը գրանուէին բազմաթիւ օտարազգի հիւրեր, որոց մէջ գլխաւորաբար կը նշմարուէին Անգլիոյ թագուհւոյն հօրեղբօրորդին Հէնրիխ իշխանը, կինն ու աղջիկները, անգլիական դեսպանուհի Լէյտի Հուսդ, դեսպանատան զինուորական կցորդ Պ. Թրոմբը, ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆ, որդին և առաջին թարգմանը Պ. Իվանոֆ, սպանիական դեսպան Պէնտանա մարքիզն ու կինը, սերպիական դեսպան Պ. Նովակովիչ, կինն ու առաջին թարգմանը՝ Պ. Թերխան, պելճիական դեսպան Պ. Պորշիրաք, պապական նունցիան Ֆ. Պանէթի, ֆրանսական դեսպանատան զինուորական կցորդ Պ. Պէրժէ, Եգիպտոսի շուէտական հիւպատոս Լանտէբպէրի կոմսը և Դավիէրայի թագաւորին թիկնապահ ու գերմանական Իւհլան դրնդին սպայներէն Պառոն տը Լէսթրոդ ու Պ. Սթաբէն։

Վեհ. Սուլթանի սենեկապահներէն Մէհմէտ Էմին պէյ այդ պաշտօնատունը գնաց և յանուն Վեհ. Սուլթանին մեծարեց անդ գտնուող օտարազգի հիւրերը։

* * *

Յաւարտ Սելամլրքի արարողութեան, Վեհ. Սուլթանի մանուր հրաւիրանօք Հռէնրիխ իշխանը, կինն ու աղջիկները, Լէյտի Հուսդ, ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆ, որդին ու առաջին թարգմանն և անգլիական դեսպանատան զինուորական կցորդ Պ. Թրոմբը յաջորդաբար Ն. Վեհափառութեան ներկայանալու պատիւն ունեցան։

ՀՈՒՆԳԱՐԱՑԻ ԶՐՕՍԱՇՐՋԻԿՔ

Վեհ. Սուլթանին հրամանաւ երէկ դիշեր Թէփէ Պաշի թաղապետական թատրոնին մէջ չքեղ հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ հունդարացի զրօսաշրջիկներուն։

Թատերասէրք դիպուդդն ծաղիկներով զարդարուած էր եւ սեղաններուն վրայ բազմաթիւ ծաղկեփունջեր դրուած էին։ Պարտէզը դրօշակներով եւ լապտերներով զարդարուած էր։ Պարտիզին մէջ զինուորական նուագածուաց խումբ մը, իսկ թատրոնին մէջ եւս նուագածուաց ուրիշ խումբ մը կը նուագէին։

Ժամ մէկին սկսաւ սեղանն, որուն, բացի հունդարացի հիւրերէն, ներկայ դտնուեցան Բերայի կառավարիչ Խմբ. լլաստ էֆէնտի, թաղապետութեան Զ. շրջանակին տնօրէն Պլաք պէյ, Զէյնէլեան փաշա, Քաղաքապետութեան մէջլիսի նդամ պէյ, կայս. թիկնապահ Նէֆիզ պէյ, աւստրիական հիւպատոսը, Լայտի ընկերութեան Կ. Պոլսոյ տնօրէն Պ. Ֆորնի, հունդարական երկաթգործոյ ընկերութեան ներկայացուցիչ Պ. Բարբոր, Բերայի ժանտարմաներու հրամանատար դնդապետ Հիւսէյին պէյ, հունդարացի Տօքթ. Գոնոշ և այլք։ Հացկերոյթի պահուն թատրոնին օթեակներուն մէջ կը դտնուէին բարձրատիճան օտարազգի ընտանիքներ։ Հունդարացի հիւրերը հացկերոյթէն յետոյ նոցա բաշխեցին սեղանին վրայ դտնուած ծաղկեփունջերն։ Սեղանին վրայ երբ կարգը պատուներուն եկաւ Պլաք պէյ բանախօսութիւն մ'ընելով ըսաւ թէ հունդարացի հիւրերուն ի Կ. Պոլիս ժամանումը Վեհ. Սուլթանի գոհունակութիւն պատճառած էր, թէ հիւրասիրութիւնն օսմանցիներու ազգային կրթութեան պահանջմունքներէ մին լինելուն համար տրուած էր այս սեղանն և թէ Ն. Վեհափառութիւն իրեն յանձնած էր, յանուն իւր, հունդարացի հիւրերուն ընծայել հարկ եղած մեծարանքները։ Ներկայք ծափահարելով պատասխանեցին Պլաք պէյի այս բանախօսութեան և Զէյնէլեանի փաշա մաճառ լեզուի թարգմանելով զայն հունդարացիք սկսան գոչել «Կեցցէ՛ Սուլթան Ապդ-Իւլ-Համիտ Կայսր»։ Նոյն պահուն նուագածուք Համիտիէ քայլերգը նուագեցին եւ բոլոր ներկայք ոտանկայս ունկնդրեցին։ Յետոյ կարգաւ իսօսեցան հունդարացիներէ մէկ քանին և իւրաքանչիւր բանախօսութեան վերջը բոլոր ներկայք գոչեցին «Կեցցէ՛ Վեհ. Սուլթան»։

Հացկերոյթէն յետոյ հունդարացի հիւրերն ի իրենց սենեակիցք պարտեղ իջան ուր հրախաղութիւնք կատարուեցան և զինուորական նուագածուաց խումբը ու թատրոնին նուագածուաց խումբն յաջորդաբար ընտիր կտորներ նուագեցին մինչեւ կէս գիշեր։

Այս առթիւ մեծ ոգեւորութիւն կը տիրէր պարտէզին մէջ որ լի էր երկսեռ բազմութեամբ։

ՊԱՇՏՕՆԵՒՈՅ ԱՐՍԱԹՈՇԱԿԸ

Թուրք լրագրոյ տեղեկութեանց համաձայն, այսօրուընէ սկսեալ ներկայ տարւոյ մարտի ամսթոշակը պիտի վճարուի կառավարական բոլոր պաշտօնէից և քարտուղարաց։

ՌՈՏՈՍԹՈՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

Ռոտոսթոյի նորընտիր կառավարիչ Սալիհ Զէքի պէյ իւր պաշտօնին վերաբերեալ հրամանագրերն ստացած ըլլալով այսօր վաղը իւր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

ՏԷՐՈՒԹԵԱՆ ՊԻՏՈՅԻՑ ՀԱՅԱՍԱՅԹՈՒՄՆ

Բարձր. Մեծ-Եպարքոսն, որոշմամբ Նախարարաց Խորհրդոյ որ վաւերացած է կայս. Իրատեով, հրահանգուզրած է ամեն կողմ թէ յետ այսորիկ Տէրութեան հարկ եղած պիտոյքները պէտք է գնել օսմանեան հպատակ վաճառականներէ և եթէ հարկ տեսնուած պիտոյքներն եւրոպացի վաճառականք միայն ունենան, յայնժամ ևս պէտք է ամեն միջոց ձեռք առնուլ ազատային որ և է դատի տեղի չտալու համար։ Նոյնպէս եթէ Եւրոպայէ բերուելիք պիտոյքներու համար օսմանեան հպատակ վաճառականք յանձնառու լինին, պէտք է նախապատուութիւնն այս վերջնոց տալ։

«ՍՕՍԻԷԹԷ ՕԹՕՄԱՆ» ԴՐԱՄԱՏՈՒՆԸ

«Սօսիէթէ Օթօման տը Շանժ է տը Վալէօռ» դրամատան բաժնետերաց տարեկան 15րդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ այս չորեքշաբթի, ի Դալաթիա, ընդ նախագահութեամբ Պ. Ա. Պարքէրի։ Ներկայ և ներկայացեալ բաժնետերաց թիւն էր 45, որք ունէին ընդ ամենը 19,630 բաժնեթղթի։ Ըստ որում այս թիւ աւելի է քան այն կանոնական թիւն որ որոշուած է ժողովոյն որոշմանց օրինաւորութեանը համար, իսկոյն ձեռնարկուեցաւ ուրիշ ձեւակերպութեանց։ Պ. Պ. Հուրդոլ և Մավրօքօրտաթօ, իբր ամենէն աւելի զօրաւոր բաժնետերաց, —մին 1800 և միւսն 1250 բաժին ունենալով— քննիչ անուանուեցան, և Պ. Սրանսոսի՝ քարտուղար։

Վարչական խորհրդոյ տեղեկագրէն, զոր կարդաց նախագահը, կ'երևի թէ վերջին տարւոյն մէջ Սօսիէթէ Օթօման պանքայի ձեռամբ կատարուած փոխանակագրոյ գործողութեանց դումարը կը հասնի շուրջ 9 միլիոն անգլ. ոսկւոյ, որ 10,397 ոսկւոյ չահ մը թողած է։ Դրամատան ընդհանուր չահն եղած է 32,268 օսմ. ոսկի. մէն մի բաժնեթղթի 33 դրուշ չահաբաժին տրուած է և 3290 ոսկի յատկացուած է պահեստի դումարին, որով կանոնական պահեստը կը հասնի 20,710 ոսկւոյ, այսինքն վճարեալ դրամագլխոյն 100ին դրեթէ 6 ին։

Վարչական խորհրդոյ կողմէ ներկայացեալ բոլոր առաջարկութիւնք ընդունուեցան բաժնետերաց ժողովոյն կողմէ։ յետոյ, ժողովը նկատելով որ դրամատան գործոց բարւոք կացութիւնը ձեռք բերուած է գլխաւորաբար հնարիւ ջանից տնօրէնին՝ Պ. Ֆ. Լիվենիտէսի, միաձայնութեամբ անդամ ընտրեց զնա վարչական խորհրդոյն, որուն մէջ մինչեւ յարդ խորհրդատու ձայն ունէր միայն։ Պ. Լիվենիտէս կը պահէ միանգամայն տնօրէնի պաշտօնը։

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Մայրաքաղաքիս ռումանական դեսպանատան երկրորդ քարտուղար Պ. Քրէֆիլէսքօ նոյն պաշտօնով Վիեննա փոխադրուած է և իրեն յաջորդած է տատ Պ. ԿրէՖիանս։

* * *

Բարիզու ռումանական դեսպանատան քարտուղար Պ. Նանս Կ. Պոլսոյ հիւպատոս անուանուած է Պ. Ռօմալի տեղ որ Հռոմ կ'երթայ տեղւոյն ռումանական դեսպանատան առաջին քարտուղարի պաշտօնով։ Պ. Նանս Պատուոյ Լեգէոնի պատուանշանն ստացած է այս օրերս ֆրանսական կառավարութենէն։

«ՍՄԻԹ» ԵՒ «ԻԼԻԱՍ» ՇՈՒԵՆԱՒԻՔ

1886 նոյեմբեր 5ին Մարմարայի ծովուն մէջ իրարու բաղխած էին անգլիական ժ. Մ. Սդէր և յունական Իլիաս շոգենաւք։ 1887ի սկիզբը, մայրաքաղաքիս անգլիական հիւպատոսարանի դատարանը վճռած էր որ յունական շոգենաւը միայն յանցաւոր էր այս արկածին մէջ։ Այս վերջնոյն տերերը Լոնտոնի բարձրագոյն դատարանին դիմած են որ յայտարարած է թէ երկու շոգենաւերն ալ հաւասարապէս յանցաւոր են և թէ երկու շոգենաւուց իւրաքանչիւրին կրած վնասուն կէսը միւսը վճարելու է։ Այս վճռոյն համեմատ՝ հիւպատոսարանի դատարանն որոշեց երկուքին կրած վնասը։ Սդէր շոգենաւուն պահանջած վնասուց դումարը որ 463 ոսկի էր, 110 ոսկւոյ իջեցուեցաւ, և Իլիաս շոգենաւուն պահանջած դումարն որ էր 10,221 ոսկի, 5,753 ոսկւոյ իջեցուեցաւ։ Այս վերջին դումարին կէսը պիտի վճարէ անգլիական շոգենաւն և 110 ոսկւոյ կէսն ալ պիտի վճարէ յունական շոգենաւն։ Անգլիական շոգենաւուն փաստաբանն էր Պ. Էտվին Բիրս, և յունական շոգենաւունը՝ Պ. Լէվիս ՄիՀի։

ԶԵՂՏՄՈՒՆՔ

Երէկ ծանուցուեցաւ թէ Պէյլերպէյի հիւանդանոցին առաջին քարտուղար Ա. Բրիի էֆէնտի իւր պաշտօնին մէջ զեղծումներ գործած ըլլալով խոյս տուած էր։ Արդ, Թուրքէ կ'իմանայ թէ Արիի էֆէնտի 70,000 օսմ մսի գինն ինչպէս նաեւ 15,000 դրուշի ուրիշ դումար մը գողցած է և թէ ոստիկանութիւնը յաղթած է նախընթաց իրիկուն ձերբակալել զնա իւր եղբօր տան մէջ ի Բատրիա։ Արիի էֆէնտի անմիջապէս յանձնուած է Սպարապետի Դրան զինուորական ատեանին։

ԷՏՀԷՄ ՓԱՇԱ

Նախկին Մեծ-Եպարքոս Էտհէմ փաշա երէկ առաւօտ Մարսէյլի Լա-Ղիֆ նաւուն մեկնեցաւ։ Ն. Բարձրութիւն Պրուսայի ջերմուկները կ'երթայ։

ՕՍՄ. ԲԻԺԻՆ

Վերջին ամսոյ մէջ, օսմ. ծխախոտի Բիժիի հասոյթից գումարն հասած է 142,000 օսմ. ոսկւոյ։

* * *

Բիժիի համար պէտք եղած ծրարի եւ այլ թղթոց նուազուրդը տեղի ունենալով նախընթաց օր, Սգիրիոյ (Աւստրիա) գործարան մը, որոյ Կ. Պոլսոյ ներկայացուցիչն է Պ. Ռիւսոլֆ Սիգ, ստանձնեց այդ հայթայթումն 19 000 ոսկւոյ փոխարէն։

ՄԱՀ ՀԻՒՍԷՅԻՆ ՓԱՇԱՅԻ

Միջերկրականի օսմանեան նաւատորմին հրամանատար Հիւսէյին փաշա, որ երեկոյ տունէ ի վեր հիւանդ էր, անցեալ ամսոյ 27 ի մեռեր է ի Կրէտէ։ Յուղարկաւորութիւնը կատարուեր է մեծ հանդիսիւ ի ներկայութեան բարձրատիճան պաշտօնէից և մարմնոյն ամիսներեւ է յատուկ դամբարանի մէջ։

ԱՐԳԻԼԵԱԼ ԼՐԱԳՐԻՐ

Ի Լոնտոն հրատարակեալ Տէյլի Քրոնիքէլ լրագրոյ ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ։

ՑՈՆԴՈՒԳՈՅ ՓԱԽՈՒՍՏ ՄԸ

Ոստիկանութիւնը երեքշաբթի օրը Ղալաթիոյ աշտարակին մերձակայ սրճարանի մէջ Գրիգոր անուն Պրուսացի երիտասարդ մը ձերբակալած էր որուն վրայ կասկած կար թէ կարգ մը գողութեանց, և մասնաւորապէս Զատկի կիւրակէ օրը եէնի-գարբոսի եկեղեցւոյն մէջ կատարուած գողութեան հեղինակն եղած ըլլայ։ Գրիգորի վրայէն քանի մը արժէքաւոր նիւթեր գտնուեցան զորս ուստից առած ըլլալը չէր կրնար խոստովանիլ։

Ձերբակալեալն ուղղակի Դալաթա Սէրայ տարուեցաւ եւ չորեքշաբթի օրը այդ չէնքին վերնայարկը տարին զինքը, լուսանկարն հանելու համար։ այն պահուն յորում լուսանկարիչը իւր սեւ խցիկ կը մտնէր, Գրիգոր յանկարծակի վրիպեցնել իր վրայ հսկող ոստիկանին ուշադրութիւնը, պատուհանէն դուրս նետուեցաւ եւ կիսի պարտէզը ցատքեց, առանց բնաւ վնասուելու, թէպէտ տնգաին բարձրութենէ մը ցատքած էր։ յետոյ, Լիսէի մեծ դրան վանդակներէն վեր մագլցելով, մեծ ճարպկութեամբ փողոց ելաւ քանի մը վայրկենի մէջ։ Թէպէտ վարժարանին փոքր դրան պահապանը վազեց բռնեց թեւերէն, սակայն Գրիգոր հագուստը այդ մարդուն ձեռքը թողլով, ինք խոյս տուաւ և անհետացաւ Շիտակ ճանբուն կողմնակի փողոցներուն մէջ։ Ցանգուգի փախստականը ձերբակալուած չէ տակաւին։

Երէկ Թրէպոլիէն եկող աւստրիական շոգենաւ մը ի հաշիւ կայս. կառավարութեան Հայրաքաղաքս բերաւ 52 մնուտկ մարդկերան հրացան, որք Թնդանօթարանին յանձնուեցան։

—Երէկ իրիկուն ժամ 9ին ի Պէյլերպէյ Հաուզ Պաշը թաղը պարտկի մը մէջ դտնուած խոհանոց մը բռնկելով այրեցաւ իւր մօտ գտնուած քէօշկով մը։

—Զինուորական Քննիչ Ցանձնաժողովոյ անդամներէն զօրաբաժնի զօրավար Ասաֆ փաշա երէկ մայրաքաղաքս ժամանեց։

—Իտալական հիւպատոսարանի դատարանի նախագահն Պ. Տէլլաչէզա և դեսպանատան թարգման Պ. Բոռէսթա երէկ Պանտրբա ուղեւորեցան։

—Անգլիոյ թագուհւոյն հօրեղբօրորդի Հէնրիխ իշխանը, կինն ու աղջիկներն երէկ գիշեր Վիեննայի ճամբով Լոնտոն ուղեւորեցան Եւրոպական կառախմբով։

—Վեհ. Սուլթանի ծննդեան տարեդարձին առթիւ ի Պրուսա յիսուն չափ բանտարկեալք ազատ արձակուած են։ Ադրիանուպսոյ մէջ եւս 44 բանտարկեալք արձակուեր են։

—Գերմանական դեսպանատան պահակ Լէրէյ շոգենաւն այսօր Պիրէոն կ'ուղեւորի։

—Խասգիւղցի Նուազար Յովհաննէս երէկ Եէմիշ Խիկլիսիէն այլ և այլ բեռներ առած Խասգիւղ կ'անցնէր երբ ճամբան նաւակը ջուր առաւ և ընկղմելու մօտ էր երբ պահակ շոգենաւէն օգնութեան փութալով ազատեցին նաւավարը։

—Կէլիպոլուի մէջ կանանց յատուկ բանտ մը պիտի շինուի ի մօտոյ։

—Ոստիկանութիւնն երէկ յԱդրիանուպոլիս, ի Սէլանիկ և այլուր աքսորեց տասն հինգի չափ չարագործներ։

—Թնդանօթարանի վերատեսչութիւնն որոշած է չափաւոր գնով մը անհատից վաճառել թնդանօթարանի մէջ պատրաստուած հրթիռներն։ Ասկից առաջ այդ հրթիռներ ձրիաբար կը տրուէին բարձրատիճան անձանց միայն։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 15 ապրիլ Դահէկան

Օսմանեան Բօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Բ. Սէրի		17 38
Պօրսայի գոցուելէն վերջը	»	17 38
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	17 39
Կէս օրին	»	17 37

ԻՍԹԻԳՐԱՁՐ ՏՈՒԹԵԼԻ

Երէկ երեկոյ		43 26
Այս առաւօտ		42 26
Կէս օր		42 25

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹԼԹՈՅ

Փոխառութիւն	Ա. Սէրի	29 20
»	Բ. »	17 15
»	Գ. »	17 37

ԲԱԺՆԵՏՈՄՔ

Սօսիէթէ ֆէնէրալ	Ադգ. Լր.		4 34
Քրէտի ֆէնէրալ	Օսմ.	»	9 9
Պանք տը Գոնս	»	»	7 20
Սօս. Շանժ է Վալէօր	»	»	4 31
Թրամուէյ	»	»	470
Բուսվէլի երկաթուղի		Ֆր.	59 25
Սպլիկասիոն տը Բրիօրիթէ		»	— —
Բաժնեթուղթ Լավրիօմի		»	105

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄԱՅ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 35
Անգլիական ոսկի	»	110 25
Իմպերիալ	»	90 37
Ֆրիմիդ	»	51 20
Լուսպի թղթադրամ	»	8 52
» արծաթ	»	77 25
Մէճ. արծաթ (ամբրլ)	»	108 25
Վիեննայ	»	103 20
Հիւնգնոց	»	103 30
Մէթալիք	»	102 20
Թասքիսէ	»	9 30

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 26 Ապրիլ ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտ		98 3/8
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ		16 3/8
» » » գոցուեցաւ		16 9/16
» » » Ա		29 1/4
» » » Բ.		17 1/8
» » » Գ.		16 3/8
Օթոման 1871		92
Փոխառութիւն 1877		101
Պանք Օթոման		12 1/8
Ռուսական փոխառ. 1873		103 1/8
Եգիպտական միացեալ (ունիֆիէտ)		92 1/4
» առանձ. (բրիվիլեժիէ)		103
Տայրա Սանիէ		85 3/8
Օսմանիայ փոխառ. Բօշիլը		104 1/2
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25 45

Վիեննա, 26 Ապրիլ, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	120 20
Օսմանեան երկաթուղի	31 50

Բարիզ, 26 Ապրիլ ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	196 10
» » 3 %	87 05
Օսմանեան քոնսոլիտ Սէրի Դ. բացուեցաւ	16 70
» » » գոցուեցաւ	16 70
» » » Բ.	17 10
» » » Դ.	16 75
Օսմանեան երկաթուղի	60 62 1/2
» Լեժիի բաժնեթուղթ	— —
Պանք Օթոման	557 50
Գրէտի Լիոնէ	692 50
Ֆոնսիէ	1317 50
Գոնդուսա տ'Էսպանյա	120
Սուէզի ջրանցք	2365
Իսպանական 5 % 1877 թ.	— —
Իտալական Ռանթ	97 47 1/2
Սպանիական (արտաքին)	76 3/4
Եգիպտական միացեալ	466 25
Բրիօրիթէ թիւրք	451 25
Հելլենական 5 %	460
Զէլլէ Լոնտրայի վրայ	25 26

ԳԻՏՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ցունաց Սիլլոգոսի Ընկերութեան սուգը վերջացած լինելով՝ Ռէթորիկայի վրայ մեր դասախօսութիւնը կ'սկսինք առաջիկայ երկուշաբթի ապրիլ 17/29 իրիկուան ժամ 9ին (Ը. Ե.), Սիլլոգոսի մէջ։ ՍԻՄՈՆ ՅՈՎՀԱՆՆԵԱՆ

ԿԻՍՕՆ Ի ԳԱՍԸՄ-ԲԱՇԱ

Սէրգեան Սարգիս ի հեղինակ Միհրան էֆ. Յովհաննէսեան, իր այս երկին առթիւ յայտնուած փափաքներէն օգտուելով, սկսած է գրել զուտ ժողովրդական ոտանաւորներ, ժողովրդական բարբառով։ Ի տարեւ կը հրատարակենք կիսոն է Գասըմ-Բաշա. իբր նմոյշ մը այդ կարգի բանաստեղծութեանց։

Լէ, լէ՛· լէ, լէ՛· խըրպան է,
Խասըմ-Բաշա մէյտ

Դի՛, նա, առաջքս են լաճեր,
Ինչքա՞ն բոյ բոսն են աճեր,
Բարով, կանե՛ն, ի մեր սար,
Մեզ՝ գալդ երկնից է խաւսար։

Ա՛մա, չախչա՞ուն էմ, ի՞նչ երի,
Ղարիպ էղէ, սիրաս կիէրի։
Լուռ կաց, աչուդ, ի՞նչ պէտք երդ,
Կիգեամ, կիգեամ իմ տիվերդ։

ՄԻՀԻՐԱՆ ՑՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

1· Ֆէս—հոս
2· Ճոլ—մեծ
3· Լաճ — տղայ
4· Իսկի — երբ որ
5· Հէնց — այն ատեն
6· Շողցեր է — կը փայլի
7· Խաւքեր — թռչուններ։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՊԱՌՆՍ

Գասպար էֆ· Նեմցէ այս վերնագրով մատենախօսական գիրք մը կը հեղինակէ, յորում կը խօսի բոլոր հայ գրագիտաց և բանասիրաց երկերուն և ոգւոյն վրայ։ Այդ գրքին նկատմամբ գաղափար մը տալու համար, ի տարեւ կը հրատարակենք հետեւեալ մասն, որ կը վերաբերի մեր երիտասարդ վիպասան Գրիգոր էֆ· Զոհրապի։

La réalité rend l'action bien plus palpitante que la fiction la mieux interpretée.

Mme L. d'Alq

Գրիգոր Զոհրապ, երիտասարդ վիպասան մ'է, հասուն խորհրդածութեան մը, բեղմնաւոր իմացականութեան մը տէր։

Նա ընկերական բարուց նկարագիրը քաջ սերտած, մարդկային կրից ու ըղձից քաջատեղեակ՝ կ'ինչնէ գրական հրապարակը, մերթ վէպով մը ու մերթ նորավէպով մը մարանչիլ ու մաքառիլ անիրաւութեանց բագնին դէմ, բագին՝ որ կը պաշտուի թանձր ըստուերներու, մութ անկիւններու ու սե՛ւ սրտերու մէջ....

Գրիգոր Զոհրապ գիտէ թափանցել անլոյս անարեւ տեղերը, ուր կը յաճախէ թշուառութիւնը, ուր կը ծառանան վատ հոգիներու ուրուականները, ուր կ'ուռճանան ամենէն աղեխարշ ցոփութիւնները, և ուր լայն լայն խրամատներ կը բացուին խաւարի մէջ ընկղմելու լուսոյ վերկարար ներգործութիւնը։

Մարդկային ճիւաղներու այս ամբոխը որ միշտ խոյս կուտայ ճշմարտութեան ատենէն, պիտի գանէ վերջապէս իւր դէմը՝ լուսոյ ահարեկիչ խարազանը որ պիտի ձաղկէ այդ ըմբոստ գլուխներն, գլուխներ եղուերի ու տղմի մէջ թաթախուած, տգիտութեան ու նախապաշարմանց թակարդին մէջ բռնուած, որք չեն յագենար ու չեն սոսկար ընկերական չէնքին հիմունքը խախտել և զայն խօթութեանց ու խենդանաց մէջ գահավիժել։

Ապաքէն մեր երիտասարդ վիպասանն ամեն անցից ու իրաց հետաքրքնին, ամեն խորհրդոց ու գործոց իրաղեկ կուգայ գրիչ ի ձեռին պատկերել մեզ այդ տեսարաններն, այդ սև գծերն ու սեւաթոյր դէմքերն....

